ՀՀ ԿԳՄՍ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը հայոց պատմություն առարկայի դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ Հայոց պատմություն

ՂԵԿԱՎԱՐ Կիմա Օհանեսյան, առաջին խումբ

ՀԵՂԻՆԱԿ Բաբայան Գոհար

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Ջերմուկի Մ. Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ 5

1. 1. Սովորողների ինքնուրույն գործունեության կազմակերպումը 5

1. 2. Սովորողների մեջ նախաձեռնության զարգացման ուղիները 8

1. 3. Սովորողների ստեղծագործական մտածողության ձևավորումը 10

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ 12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Միջին դպրոցականների ուսուցման գործընթացում մեծ դեր ու նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Աշակերտների ինքնուրույն գործունեությունը կարևոր է ինչպես դպրոցում, այնպես էլ կյանքի բոլոր բնագավառներում: Ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները: Ինքնուրույն գործունեության նպատակը նոր սերնդին կյանքին, աշխատանքին նախապատրաստելն է: Ինքնուրույն գործունեության նպատակը բոլոր ժամանակներում որոշվում է հասարակական պահանջներով, գիտատեխնիկական առաջընթացի զարգացումով, մանկավարժության տեսության և պրակտիկայի զարգացման մակարդակով, ուսումնական հաստատություններով և ուսուցիչների զարգացման մակարդակով: Ինքնուրույն գործունեության նպատակի սահմանման հարցը որքան հին է, այնքան էլ արդիական է:

Սովորողների նախաձեռնողության և ստեղծագործական մտածողության զարգացումը կրթության հիմնական խնդիրներից է: Ստեղծագործական մտածողությունը զարգանում է դպրոցական տարբեր փուլերում: Դպրոցն է, որ ստեղծագործական մտածողությունը դնում է աշակերտի գիտակցության կենտրոնում: Միաժամանակ առանձնահատուկ նշանակություն ունի միջին դպրոցական տարիքի աշակերտների ստեղծագործական մտածողության զարգացումը: Քանի որ ժամանակակից աշխարհում շատ կարևոր են խնդիրների լուծման կրեատիվ և արտասովոր ձևերը, աճում է մարդկանց պահանջարկը, ովքեր կարող են մտածել ստեղծագործաբար: Ապագայում հաջողակ լինելու համար շատ կարևոր է հնարավորինս շուտ զարգացնել մտածողության ինքնատիպությունը, և այդ ժամանակ կյանքում հաջողության հասնելու ավելի շատ հնարավորություններ կլինեն: Կրտսեր դպրոցականների ստեղծագործական մտածողության զարգացման գործընթացը տեղի է ունենում առանց հասկանալու այս գործընթացում հոգեբանական տեխնիկայի և միջոցների նշանակությունը: Հենց դա էլ հանգեցնում է նրան, որ սովորողների մեծ մասը չի

կարողանում տիրապետել գիտելիքների համակարգման մեթոդներին, որոնք հիմնված են նախաձեռնության և ստեղծագործական մտածողության վրա:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել Հայոց պատմություն առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացման մեթոդները և ձևերը: Ուստի սահմանվել են հետազոտության նպատակից բխող հետևյալ խնդիրները.

- ✓ Ուսումնասիրել սովորողների ինքնուրույն գործունեության կազմակերպման մեթոդները,
- ✓ Բացահայտել սովորողների մեջ նախաձեռնության զարգացման ուղիները,
- ✓ Ներկայացնել սովորողների ստեղծագործական մտածողության ձևավորման եղանակները,
- ✓ Իրականացնել հետազոտություն թեմայի ուսումնասիրության շրջանակներում:

ԳԼՈՒԽ 1. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1. 1. Սովորողների ինքնուրույն գործունեության կազմակերպումը

Երեխան ունի իր առանձահատուկ տեսնելու, մտածելու և զգալու ունակությունները: Չկա ավելի հիմար բան, քան փորձել փոխարինել դրանք մեր ունակություններով: Այսպիսին է Ժ. Ժ. Ռուսոյի մեկնաբանությունը սովորողների ինքնուրույնության վերաբերյալ: Քանի որ ներկայումս բոլոր ոլորտներում զարգացման տեմպերն արագանում են, ուստի այդ թվում նկատվում է զարգացում կրթական համակարգում: Եվ անհրաժեշտ է աշակերտներին տալ հիմնարար գիտելիքներ և սովորեցնել ինքնուրույնություն: Այս համընդհանուր զարգացման աշխարհում առանձնահատուկ կարողություն է մարդու ինքնուրույնությունը, այն անձնային որակ է: Ինքնուրույնությունը, սեփական կյանքը կազմակերպելու, սեփական հոգևոր ու մտավոր հնարավորությունները գիտակցելու, գնահատելու և ըստ այդմ իր զարգացման ուղին ընտրելու մարդու ընդունակությունն է:

Ինքնուրույնության ձևավորման նախապայմանն ազատությունն է: Որպեսզի սովորողն ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ հնարավորությունը տալ: Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը: Ինքնուսուցման պարագայում սովորողն ինքն է կազմակերպում, կարգավորում և հսկում իր իմացական գործունեությունը: Ինքնուրույն ուսումնական աշխատանքները լավագույնս կարելի է իրականացնել ուսուցման գործընթացը՝ մասնակիորեն հետազոտական գործընթացի վերածելով:

Երեխայի ինքնուրույն գործունեությունը սկսում է ձևավորվել դեռևս վաղ մանկության շրջանում: Ուսուցման գործընթացում, կրտսեր դպրոցական տարիքից սկսած, սովորողներին պետք է սովորեցնել աշխատել ինքնուրույն: Երեխայի ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դրսևորվում դասից դաս, դասարանից դասարան:

Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց, այն նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը: Աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ.

- ✓ Ճիշտ և պարբերաբար կազմակերպված ինքնուրույն աշխատանքի արդյունքում սովորողներն առավել խորը և ճկուն գիտելիքներ են ձեռք բերում, քան այն դեպքում, երբ ուսուցիչն ինքն է մշտապես պատրաստի գիտելիքներ մատուցում:
- ✓ Ինքնուրույն աշխատանքի շնորհիվ նորը ճանաչելու ցանկություն է առաջանում: Իսկ այդ ցանկությունը նպաստում է այն կարողությունների զարգացմանը, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատարելագործման համար:
- ✓ Ժամանակի ընթացքում դասերին ինքնուրույն աշխատանքի պարբերաբար կազմակերպման և տնային տարատեսակ ինքնուրույն աշխատանքների կազմակերպումը նպաստում է սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը:
- ✓ Ինքնուրույն աշխատանքի անցկացումն արագացնում է սովորողների գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումն ու զարգացումը:

Վերը գրվածից պարզ է դառնում, թե որքան մեծ նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում: Տարրական դասարաններում գործունեություն ծավալելու կարողության ձևավորումը, իսկ այն հնարավոր է իրականացնել սովորողների ինքնուրույն գործունեության արդյունավետ կազմակերպման միջոցով: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, սովորողների ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի կառուցվածք:

Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում, ուստի անհրաժեշտ է նախապես մշակել դասի պլանը, ընտրել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը, դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում ինքնուրույն աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման

ձևերի մասին: Հատկապես տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական երաշխավորություններ, հուշաթերթիկներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները:

Անդրադառնանք աշակերտների ինքնուրույնության չորս մակարդակ, դրանք են.

- ✓ Վերարտադրողական ինքնուրույնություն- Դրսևորվում է հիմնականում վարժությունների կատարման ընթացքում: Այս մակարդակն ունեցող աշակերտն առաջադրաքների կատարման ընթացքում կիրառում է ձեռքի տակ եղած օրինակի մեթոդը:
- ✓ Ընտրովի ինքնուրույնություն- Աշակերտը մի շարք կանոններից, օրինակներից ընտրում է մեկը, կիրառում այն նոր առաջադրանքների ինքնուրույն կատարման ընթացքում:
- ✓ Մասնակի որոնողական ինքնուրույնություն- Աշակերտն առաջադրանքի կատարման ընթացքում կիրառում է ընդհանրական կարողություններ, որոնք ձեռք է բերել այլ թեմաների ուսուցման ընթացքում: Նա կարողանում է պլանավորել և կազմակերպել իր ինքնուրույն գործունեությունը:
- ✓ Ստեղծագործական-Հետազոտական ինքնուրույնություն- Այս մակարդակում աշակերտը դրսևորում է ստեղծագործական մակարդակ:

Այսպիսով, ամեն ինչի հիմքում ազատության գաղափարն է: Վստահել մարդուն և հնարավորություն տալ նրան ընտրելու կրթության սեփական ուղի, օգնել նրան սեփական ճանապարհն անցնելու: Պարտադիր ուսուցումը, ենթատեքստում ունի սովորողի հանդեպ անվստահության մտայնությունը, ինչը մարդուն զրկում է իր ամենացանկալի որակից՝ ինքնուրույնությունից, նաև աշխարհի հանդեպ կենդանի և ակտիվ հետաքրքրությունից, ուստի ուսուցման գործընթացի կազմակերպման նոր ձևերը, մեթոդները և տեխնոլոգիաները պետք է նպաստեն մարդու ինքնուրույնության ձևավորմանը, հիմնարար գիտելիքների ձեռքբերմանն ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

1. 2. Սովորողների մեջ նախաձեռնության զարգացման ուղիները

Նախաձեռնողականությունը մարդու չափազանց կարևոր հատկանիշ է, և, մեր կարծիքով, այդ որակի դաստիարակությունը մեծապես կախված է ուսուցչի գործունեությունից, քանի որ հենց նա պետք է դաստիարակի երեխայի բարոյական և կամային հատկությունները: Շատ ուսուցիչներ և գիտնականներ, ինչպիսիք են Տ.Ս. Բորիսովան և Է.Պ. Իլյին անհատականության այս հատկությունը նրանք վերագրում են բարոյական-կամայինին[1]:

Նախաձեռնությունն արտահայտվում է կամավոր գործունեությամբ (ի շահ հասարակության, խմբի, անձնական շահերի), աշխատանքի նկատմամբ ստեղծագործ վերաբերմունքի և վարքի հաստատված ձևերի (սովորույթներ, բարքեր, ավանդույթներ): Բարոյական իմաստով նախաձեռնությունը բնութագրվում է նրանով, որ մարդն իր վրա է վերցնում ավելի մեծ պատասխանատվություն, քան պահանջվում է ընդհանուր ընդունված նորմերի պարզ պահպանմամբ: Նախաձեռնությունը սոցիալական կարգապահության անբաժանելի մասն է, սա սովորողի և թիմի փոխազդեցության այն կողմն է, որտեղ ակտիվ սկզբունքը անհատն է: Նախաձեռնության չափը, որը ուսուցիչը կարող է զարգացնել սովորողների մեջ, ցույց է տալիս, թե որքանով է այն իրական նախադրյալներ ստեղծում անձի ազատության համար և նպաստում մարդու անհատականության ձևավորմանը[2]:

Նախաձեռնողական վարքագծի զարգացման համար անհրաժեշտ պայման է երեխայի դաստիարակությունը զարգացող, ոչ ավտորիտար հաղորդակցության պայմաններում: Սիրո, փոխըմբռնման, հանդուրժողականության և գործունեության կարգուկանոնի սկզբունքների վրա հիմնված մանկավարժական հաղորդակցությունը կարող է երեխայի ազատության և անկախության լիարժեք զարգացման համար դրական և կարևոր նախապայման դառնալ: Նախաձեռնությունը պահանջում է մեծահասակների բարյացակամ վերաբերմունքը, որոնք պետք է անպայման աջակցեն և զարգացնեն անհատականության

---

[1] Сентемова К. С. , Воспитание инициативности у младших Школьников в процессе коллективной Творческой деятельности, Пермь, 2016, 132с., 4с.

[2] Рыбкина, О.В. Влияние личностных особенностей детей младшего школьного возраста на школьную мотивацию/ Рыбкина, О.В.// учебнометодический портал - «Педагогический мир» - 2011 – с. 26-29.

այս արժեքավոր գիծը: Նշենք, որ երեխայի նախաձեռնությունը կարող է արգելափակվել, եթե ծնողները, ուսուցիչները թույլ չտան նրան ինքնուրույն գործել, եթե անընդհատ ու չափից դուրս պատժեն: Երեխաների զգալի մասի մոտ պատիժն առաջացնում է մեղքի զգացում, որը կարող է խանգարել հետաքրքրասիրության, նախաձեռնողականության և կամայականության զարգացմանը: Երեխան սկսում է զգալ իր անարժեքությունը, նա չունի վճռականություն՝ տեր կանգնելու իրեն, կախվածության մեջ է ընկնում ծնողներից և հասակակիցներից, ինչը հետագայում կարող է հանգեցնել խոր անձնական փոփոխությունների[3]:

Բնավորության այնպիսի հատկանիշի էությունը, ինչպիսին նախաձեռնությունն է, կայանում է նրանում, որ սովորողը կարող է ինքնուրույն կամային դրսևորումներ կատարել, որոնք արտահայտվում են[4]՝

1) նպատակների ինքնուրույն սահմանման մեջ,
2) այդ նպատակներին հասնելուն ուղղված գործողությունների ինքնուրույն կազմակերպման մեջ:

Նախաձեռնության զարգացման կարևոր միջոց է սովորողների միջև տարբեր սոցիալական պարտականությունների բաշխումը. Մեկին վստահվում է դասարանում կարգի պահպանումը, երկրորդը զբաղվում է կազմակերպչական և հասարակական միջոցառումների անցկացմամբ, երրորդը՝ պատի թերթի խմբագրումը, չորրորդը կազմակերպում է ֆիզիկական կրթության շրջանակը և այլն: Բոլոր այդպիսի պարտականությունները կապված են երեխաների նախաձեռնության դրսևորման և զարգացման լայն հնարավորությունների հետ: Այս տեսակի գործողությունների սովորողների անկախությունն ու նախաձեռնությունը պետք է իրականացվի ուսուցչի հսկողության և ղեկավարության ներքո:

---

[3] Формирование инициативности [Электронный ресурс]. http://galinamonina.ru/formirovanie-iniciativnostisamostoyatelnosti-otvetstvennosti-doshkolnikov/, 20. 09. 2022թ.

[4] Гаврилова, Т.П. Использование приемов эмоционального стимулирования в нравственном воспитании младших школьников: метод. пособие/ Гаврилова, Т.П; Перм. Гос. Пед. Ун-т. - Пермь, 2012. –43с.

1. 3. Սովորողների ստեղծագործական մտածողության ձևավորումը

Դեռ վաղ հասակից երեխայի անձի ինտելեկտուալ և ստեղծագործական զարգացման միջև առկա է էական տարբերություն: Գոյություն ունեն սկզբունքորեն տարբեր երկու տեսակի օժտվածություններ. յուրացված կամ «ուսումնական» և ստեղծագործական:

- ✓ «Ուսումնական» օժտվածությունը ենթադրում է սեփական մոտեցման բացակայություն և կապված է սովորողի ինտելեկտուալ զարգացման, այսինքն՝ հիշողության ու տրամաբանական մտածողության վարժանքի հետ:
- ✓ Ստեղծագործական օժտվածությունն այլ է: Ստեղծագործելու համար միայն ինտելեկտը բավարար չէ: Ստեղծագործող անձը պետք է գործի անորոշության պայմաններում, իմաստավորի ու վերաիմաստավորի իր գործողությունները, ոչ կաղապարային լուծումներ որոնի՝ հաճախ կռահմամբ և կանխագուշակմամբ, հաղթահարի դժվարությունները՝ նույնիսկ հիասթափության և անելանելության զգացման ի հայտ գալիս: Այդ բոլորը նա անց է կացնում իր և աշխարհի սեփական ընկալման միջով: Հենց դա է պատճառը, որ օժտված երեխաների համար հեշտ է ոչ թե գիտելիքների որոշակի հավաքածուի յուրացումը, այլ՝ ինչ–որ նոր բան գտնելը:

Ներկայիս կրթական չափորոշիչների պահանջներով ուսուցումը պետք է ուղղված լինի սովորողի զարգացմանը, իսկ յուրաքանչյուր սովորող զարգանում է յուրովի: Ուստի չափազանց արդիական է ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպումը՝ անձի առանձնահատկությունները հաշվի առնելով: Սովորողի անձի ձևավորման գործում ուսուցիչների աշխատանքի կարևորագույն ուղղություններից մեկը պետք է լինի ստեղծագործական ունակությունների զարգացումը: Յուրօրինակ լուծում առաջարկելու կարողությունը կախված է ոչ միայն գիտելիքներից, այլև մտածողության յուրահատկություններից, անձի մի շարք հատկություններից: Ստեղծագործության բոլոր տեսակների համար ընդհանուր բաղադրիչների շարքը կարելի է դասել ստեղծագործաբար մտածելու, հիմնախնդրի բացահայտման և համագործակցելու ընդունակությունը:

Մանկավարժները և հոգեբանները ստեղծագործելը դիտարկում են որպես անձի զարգացման կարևորագույն մեխանիզմ: Քանի որ դպրոցական տարիները անձի կայացման

տարիներ են, ապա ուսուցչի գլխավոր խնդիրը սովորողների ստեղծագործ անհատականության ձևավորման համար պայմաններ ապահովելն է: Հայտնի է, որ ստեղծագործումը ձևավորվում է գործունեության մեջ: Հարց է առաջանում, թե ինչպե՞ս կառուցել սովորողների ուսումնական գործունեությունը, որպեսզի առավելագույնս բացահայտվեն նրանց ստեղծագործական ընդունակությունները:

Սովորողների ստեղծագործական մտածողության հաջող զարգացման կարևոր պայմանը մտածելու ընդհանուր կուլտուրայի առկայությունն է, այդ պատճառով ուսումնական գործունեությունը դասերին ուղղվում է, առաջին հերթին, սովորողի ինտելեկտուալ ունակությունների զարգացմանը. կարողանալ վերլուծել, սինթեզել, գտնել պատճառահետևանքային կապերը, ընդհանրացնել, եզրահանգել, դասակարգել, համեմատել և այլն: Բացի դրանից, ուսումնական ստեղծագործական գործունեությունում օգտագործվում են այնպիսի ինտելեկտուալ ընդունակություններ, ինչպիսիք են հետաքրքրասիրությունը՝ զգայունությունը շրջակա աշխարհի հիմնախնդիրների նկատմամբ, վարկած մշակելու ընդունակությունը, մտքի արագությունը և ճկունությունը՝ անցումը մի գաղափարից մյուսին, մտածելու յուրահատկությունը, ասոցման (ունակություն՝ գտնելու անալոգներ այնտեղ, որտեղ ավանդաբար դրանք չեն դիտարկվում) հեշտությունը: Նշված ինտելեկտուալ ընդունակությունների զարգացումը, որոնք որոշում են սովորողների կրեատիվությունը, իրականացվում են վարժարանի ուսումնադաստիարակչական գործընթացում՝ զարգացող կրթական տեխնոլոգիաների միջոցով, այդ թվում նաև ուսուցմանը հետազոտական մոտեցմամբ:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

«Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը Հայոց պատմություն առարկայի դասավանդման ընթացքում» հետազոտական աշխատանքի շրջանակում իրականացվել է հետազոտություն Ջերմուկի Մ. Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոց 7-րդ դասարանի աշակերտների շրջանակում: Հետազոտության նպատակն էր պարզելու երեխաների ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների մակարդակը և հետագայում դրանց զարգացման նպատակով համապատասխան պլանի մշակումը: Հետազոտությունը իրականացվել է «Հայոց պատմություն» առարկայի շրջանակներում, որին մասնակցել են 19 աշակերտ, որից.

- ✓ Աղջիկ-6,
- ✓ Տղա-13:

Նշենք, որ «Հայոց պատմություն» առարկայի դասավանդման գլխավոր նպատակը ազգային գիտակցություն ունեցող, ազգային արժեհամակարգով դաստիարակված ազատ, գիտակից անհատի, հայ մարդու ու քաղաքացու ձևավորումն է: Առարկան միաժամանակ նպատակ ունի լուծելու կրթադաստիարակչական և զարգացման այլ կարևոր խնդիրներ.

- Սովորողներին զինել Հայոց պատմության հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակներն ընդգրկող ամբողջական գիտելիքներով, կկարևորվեն ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդմանհամար պայքարին սեփական մասնակցությունը բերելու գաղափարը և դրանցվերաբերող փաստերը:
- Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները, որոնք օրինակ կդառնան սովորողների համար, կոգեշնչեն նրանց և կմղեն հայրենիքին անմնացորդ նվիրվելու գործին:
- Բացահայտել պատմամշակութային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը:

- Դաստիարակել ջերմ հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում:
- Հասնել այն բանին, որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման, հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին,

Հետազոտության շրջանակներում աշակերտներին է ներկայացվել նյութը, նախնական տեղեկատվություն տրամադրելով նրանց, քննարկման միջոցով բացահայտելու նրանց մոտ առաջացած հարցերը, որից հետո աշակերտները կազմել են չորս խմբեր: Խմբերից յուրաքանչյուրն ընտրել է դասը ներկայացնելու իր տարբերակը՝ այստեղ դրսևորելով նախաձեռնողականություն և ինքնուրույնություն:

Հետազոտության շրջանակներում սովորողների ինքնուրույն աշխատանքի համար ընտրված թեմաները կարևոր են, ուստի ցանկալի էր առաջադրել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար կպահանջվի գիտելիքների կիրառում նոր իրավիճակներում: Միայն այդ դեպքում ինքնուրույն աշխատանքը կնպաստի սովորողների ճանաչողական ունակությունների ձևավորմանը և նախաձեռնողականության դրսևորմանը: Ցանկալի, որ ինքնուրույն աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները հետաքրքրեն սովորողներին: Առաջադրանքների բովանդակությունը պետք է մատչելի լինի աշակերտին, հենված լինի երեխաների կենսափորձի վրա, բայց միևնույն ժամանակ գտնվի նրանց զարգացման «մերձակա գոտում» , պարունակի որոշակի դժվարություն, որը երեխան կարող է հաղթահարել:

Առաջին խումբ- Պետական կառավարման համակարգը

Առաջին խումբը ուսումնասիրել և համեմատել էր հին շրջանի և վաղ միջնադարի Հայաստանի հասարակական կյանքը, պետական կարգը: Առաջին խմբի գիտելիքների ստուգման նպատակով խմբի անդամներին իմ կողմից հավելյալ հարցեր են տրվել, դրանք էին.

- ✓ Կառավարման տեսանկյունից ինչպի՞սի երկիր էր Հայաստանը:

- ✓ Ինպիսի՞ գործառույթներ ուներ թագավորը:
- ✓ Բացատրե՛լ գործակալությունների գործառույթները:
- ✓ Ո՞ր նախարարական տների մենաշնորհին էին հազարապետությունը, սպարապետությունը, թագակապ ասպետությունը:

Երկրորդ խումբ-Բանակ

Երկրորդ խմբին հանձնարարվել էր ուսումնասիրել Բանակը, ռազմական արվեստը, ինչպես նաև բանակի կազմը: Երկրորդ խմբի գիտելիքների ստուգման նպատակով խմբի անդամներին իմ կողմից հավելյալ հարցեր են տրվել, դրանք էին.

- ✓ Ի՞նչ կառուցվածք ուներ հայոց բանակը:
- ✓ Որքա՞ն էր հայոց բանակի թիվը:
- ✓ Ի՞նչ գիտեք՛ հին շրջանի և վաղ միջնադարի Հայաստանի հասարակական կյանքը, պետական կարգի, երկրի սահմանների և բանակի մասին:
- ✓ Ինչպե՞ս էր կազմվում հայոց այրուձին:

Երրորդ խումբ- Քրիստոնեության տարածումը Հայաստանում, Տրդատ III Մեծ և Գրիգոր Լուսավորիչ

Երրորդ խմբին հանձնարարվել էր ուսումնասիրել քրիստոնեության տարածումը, Տրդատ III Մեծի և Գրիգոր Լուսավորիչի գործունեության վերաբերյալ: Գիտելիքների ստուգման նպատակով խմբի անդամներին իմ կողմից հավելյալ հարցեր են տրվել, դրանք էին.

- ✓ Ե՞րբ է հիմնադրվել հայոց եկեղեցին:
- ✓ Ովքե՞ր են Հայաստանում քրիստոնեության առաջին քարոզիչները և ինչո՞ւ է Հայոց եկեղեցին կոչվում առաքելական:
- ✓ Ինչու՞ էր Տրդատ III-ը բանտարկել Գրիգոր Պարթևին:
- ✓ Ինչու՞ Գրիգորը մեկնեց Մաժակ Կեսարիա:

Չորրորդ խումբ- Քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն

Չորրորդ խմբին հանձնարարվել էր ուսումնասիրել քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն: Նրանց տրված լրացուցիչ տրվել էր հետևյալ հարցերը.

- ✓ Ե՞րբ և ո՞ր արքայի օրոք է քրիստոնեությունը պետական կրոն հռչակվել Հայաստանում:
- ✓ Ո՞վ է եղել հայոց առաջին կաթողիկոսը: Ի՞նչ գիտեք նրա մասին:
- ✓ Ի՞նչ գիտեք քրիստոնեության տարածման և պետական կրոն հռչակելու հետ կապված կարևոր իրադարձությունների մասին:
- ✓ Ի՞նչ դեր ու նշանակություն ունեցավ Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակումը, որո՞նք են, հայոց դարձի պատմական նշանակությունը:

Աշխատանքի շրջանակներում բոլոր խմբերն էլ ցուցաբերել են բարձր ինքնուրույնություն, օգտվելով համացանցից և գրադարանում եղած գրքերից, դուրս հանել կարևոր տեղեկատվություն: Իսկ վերջում գիտելիքների ամրապնդման նպատակով կատարեցինք խաղ-համապատասխանեցում:

Աղյուսակ 1.

Խաղ-համապատասխանեցում

Հ/Հ	Գործակալի անվանումը	Հ/Հ	Նախարարական տոհմը	Հ/Հ	Իրականացրած աշխատանքը
1	Հազարապետ	1	Խորխորունիներ	1	Թագաժառանգների դաստիարակություն
2	Սպարապետ	2	Բագրատունիներ	2	Մեծ Հայքի զինված ուժերի ղեկավարում
3	Մաղխազ	3	Մամիկոնյաններ	3	Արքունիքի և թագավորական պահակազորի հրամանատար
4	Ասպետ	4	Ամատունիներ	4	Երկրի տնտեսական-հարկային վարչություն
		5	Մարդպետունիներ	5	Պալատական արարողությունների և օտար երկրների դեսպանների ընդունելության կազմակերպումը

Նմանատիպ աշխատանքները բավականին արդյունավետ են աշակերտների խմբային աշխատանքներում ներառելու, նրանց համակարգված աշխատանքի, ինքնուրույնության, նախաձեռնողության և ստեղծագործական մտքի զարգացման համար:

Ամփոփելով, նշեմ, կրթությունը պատշաճ մակարդակով կազմակերպելու և մատուցված նյութը աշակերտի սեփականությունը դարձնելու նպատակով, կիրառվում են տարբեր մեթոդներ ՏՀՏ-ների օգտագործում, համացանցից նոր նյութերի ներբեռնում և քննարկում, տեսանյութերի ցուցադրում, բանավեճերի, վիկտորինաների, մրցույթների, խաղերի կազմակերպում: Այսպիսով, աշակերտը ստանում է կայուն գիտելիք՝ հիմնված իր իսկ կատարած ուսումնասիրությունների վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով, հարկ է նշել, որ սովորողների մոտ ինքնուրույն աշխատանքի, նախաձեռնողականության և ստեղծագործական հմտությունները չեն ծագում իրենք իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը: Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դաստիարակվում է դասից դաս, դասարանից դասարան: Այն նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատական որակ: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը: Կարելի է ասել, որ ինչպես դպրոցում, այնպես էլ ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները:

Նախաձեռնողականությունը չափազանց կարևոր անհատական հատկանիշ է: Մեր ընկալմամբ՝ մանկավարժն է, ով պետք է աշխատի նախաձեռնություն սերմանելու խնդրի վրա, քանի որ այդ հատկությունն, իհարկե, անհրաժեշտ է երեխայի՝ հասարակություն հաջող մուտք գործելու համար: Կարելի է օգնել երեխային զարգացնել նախաձեռնությունը տարբեր ձևերով (խաղեր, մտագրոհ, խաչբառ և այլն): Մեր ուսումնասիրության մեջ մենք դիտարկել ենք ինչպես կոլեկտիվ ստեղծագործական գործունեության գործընթացը՝ որպես նախաձեռնության դաստիարակման միջոց, այնպես էլ երեխաների անհատական ստեղծագործական աշխատանքը: Քանի որ նախ այն ստեղծագործական է, այն ինքնին արդեն իսկ ենթադրում է նախաձեռնության դրսևորում:

Այսպիսով, սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական մտքի զարգացմանն ուղղված համակարգված աշխատանքների կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները,ինչպես նաև դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատարելագործման համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

.

1. Гаврилова, Т.П. Использование приемов эмоционального стимулирования в нравственном воспитании младших школьников: метод. пособие/ Гаврилова, Т.П; Перм. Гос. Пед. Ун-т. - Пермь, 2012. –43с.
2. Рыбкина, О.В. Влияние личностных особенностей детей младшего школьного возраста на школьную мотивацию/ Рыбкина, О.В.// учебнометодический портал - «Педагогический мир» - 2011 – с. 26-29.
3. Сентемова К. С. , Воспитание инициативности у младших Школьников в процессе коллективной Творческой деятельности, Пермь, 2016, 132с., 4с.
4. Формирование инициативности [Электронный ресурс]. http://galinamonina.ru/formirovanie-iniciativnostisamostoyatelnosti-otvetstvennosti-doshkolnikov/, 20. 09. 2022թ